

## **ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՅԻՄԱԱՆՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՉՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՒՄ**

### **Աշխեն ԴԱՐՄԱՅԱԿԱՆ**

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ*

«Հաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների<sup>1</sup> շնորհիվ «Հաղաքացիական դատավարությունում վերականգնվեց գործը դատաքննության նախապատրաստելու փուլը։ Օրենսդիրը նախատեսել է նախնական դատական նիստը՝ որպես դատավարության այս փուլի առանցքային և նոր ինստիտուտ, որն ապահովում է գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված հիմնական գործողությունների իրականացումը։ Լինելով քաղաքացիական դատավարության համեմատաբար նոր ինստիտուտ՝ նախնական դատական նիստը ներկայացնում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական մեծ հետաքրքրություն։

Իրավաբանական գրականությունում բանավիճային է ոչ միայն նախնական դատական նիստի հասկացության սահմանումը, այլև այս ինստիտուտի անհրաժեշտության, պարտադիր կամ ոչ պարտադիր լինելու և մի շարք այլ ընթացակարգային հարցեր։

Այսպես, Ս. Օ. Բորովզինայի կարծիքով՝ նախնական դատական նիստը գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) գործողություններից է<sup>2</sup>։ Ի հիմնավորումն իր տեսակետի՝ հեղինակը նշում է, որ նախնական դատական նիստը, ինչպես և նախապատրաստական բնույթի մյուս բոլոր գործողությունները ուղղված են գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրների լուծմանը։

Ա. Գ. Պլեշանովը, հակադարձելով վերոնշյալ տեսակետին, առաջադրում է հետևյալ փաստարկները. նախ՝ գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողություն են նախնական դատական նիստ նշանակելու հարցի քննարկումը և ոչ թե նախնական դատական նիստը. Երկրորդ՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի և նախնական դատական նիստի նպատակն ու խնդիրները որոշ չափով համապատասխանում են, սակայն ամբողջությամբ չեն համընկնում. Երրորդ՝ կարելի է արդյոք նախնական դատական նիստը դիտարկել միայն որպես դատարանի գործողություն, եթե փաստացիորեն այն բաղկացած է նաև գործին մասնակցող անձանց գործողություններից. չորրորդ՝ նախնական դատական նիստը միայն որպես գործողություն դիտարկե-

<sup>1</sup>ՀՕ-277-Ն, «ՊՀ 2007.12.26/66(590), 28.11.2007:

<sup>2</sup>Տես Бороздина М. О. Предварительное судебное заседание как новелла ГПК РФ // Проблемы гражданской юрисдикции в свете нового законодательства: сб. научных статей молодых ученых Саратовской государственной академии права / под ред. А. И. Зайцева, Т. А. Савельевой. Саратов, 2003, էջ 125:

լը սահմանափակում է այս ինստիտուտի էությունը և բացահայտում է նրա միայն մեկ հատկանիշը՝ նպատակային ուղղվածությունը<sup>3</sup>:

Հեղինակը միաժամանակ առաջարկում է նախնական դատական նիստի հետևյալ սահմանումները. առաջին՝ նախնական դատական նիստը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի եզրափակիչ մասն է, որին հաջորդում է գործի ըստ էության քննությունը: Երկրորդ՝ նախնական դատական նիստը դատավարության առավել կարևոր հարցերի լուծման «հատուկ ընթացակարգ» է, որը կոչված է ապահովելու կողմերի իրավունքների իրականացումը, գործը դատաքննության նախապատրաստելու փուլի խնդիրների լուծումը և դատավարական միջոցների խնայողությունը<sup>4</sup>:

Ե. Ն. Սերդիտովան առաջարկում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլը բաժանել երկու ենթակուլյարի. առաջինը ներառում է մինչև նախնական դատական նիստը գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների իրականացումը, իսկ երկրորդը՝ նախնական դատական նիստը<sup>5</sup>:

Դատավարական գրականությունում նմանատիպ տեսակետներ են արտահայտել նաև Վ. Վ. Պետրովան<sup>6</sup>, Վ. Տ. Բարբականեն<sup>7</sup>, Մ. Լ. Սկուրատովսկին<sup>8</sup>:

Մեր կարծիքով, առավել հիմնավոր է Յա. Խ. Բեկովի սահմանումը, ըստ որի՝ նախնական դատական նիստը հատուկ ընթացակարգով իրականացվող դատավարական գործողությունների համակցություն է, որը կոչված է գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կողմերի իրավունքների իրականացման երաշխիքներ ապահովելու: Ըստ Յա. Խ. Բեկովի՝ նախնական դատական նիստը չի կարող դիտվել միայն որպես գործը դատաքննության նախապատրաստելու փուլի եզրափակիչ մաս, և այն ընդհանուր իրավասության դատարաններում կարող է իրավիրավել մեկ անգամից ավելի<sup>9</sup>: Իսկ նախնական դատական նիստի ներմուծումը բաղաքացիական դատավարության համակարգ, հեղինակի կարծիքով, հետապնդում է երեք նպատակ. առաջին՝ կարգապահական (ինչպես կողմերի, այնպես էլ դատարանի համար), մասնավորապես՝ այն կոչված է ապահովելու գործի ըստ էության քննության համար բավարար ապացուցողական նյութի կենտրոնացում. Երկրորդ՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում դատարանի կողմից իրականացվող գործողություններին հաղորդել առավել խիստ դատավարական ձև, ինչը կնպաստի գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների իրացմանը. Երրորդ՝ վեճը հաշտությամբ ավարտելու լրացուցիչ հնարավորություններ ստեղծել:

<sup>3</sup> Տե՛ս Պլեշանով Ա. Գ. Կ вопросу о сущности предварительного судебного заседания // Российский ежегодник гражданского и арбитражного процесса. № 2. 2002-2003 / Под ред. В. В. Яркова. Спб., 2004, էջ 46:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս Сердитова Е. Н. К вопросу о подготовке дела к судебному разбирательству в гражданском и арбитражном процессах: сравнительно-правовой аспект. М., 2004, էջ 61:

<sup>6</sup> Տե՛ս Петрова В. В. Подготовка дела к судебному разбирательству: теория и практика. Краснодар, 2004, էջ 336:

<sup>7</sup> Տե՛ս Барбакадзе В. Т. Подготовка дела к судебному разбирательству как стадия арбитражного процесса. Дис. канд. юрид. наук. Саратов, 2006, էջ 8:

<sup>8</sup> Տե՛ս Скуратовский М. Л. Подготовка дела к судебному разбирательству в арбитражном суде первой инстанции. М., 2007, էջ 8:

<sup>9</sup> Տե՛ս Բեկօվ Յ. Խ. Подготовка дела к судебному разбирательству в гражданском судопроизводстве. М., 2010, էջ 107:

Ուշագրավ է նաև Օ. Ն. Ղիորդիկայի տեսակետը: Հեղինակն առաջարկում է նախնական դատական նիստն առանձնացնել որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն փուլ՝ սահմանելով հետևյալ խնդիրները.

ա/ գործի ըստ էության քննության նախապատրաստում.

բ/ դատավարական խնայողության ապահովում<sup>10</sup>:

Օ. Ն. Ղիորդիկայի կարծիքով, նախնական դատական նիստի դերի բարձրացումը կարող է կանխել դատական պրակտիկայում արմատացած այնպիսի արատավոր երևոյթ, ինչպիսին գործերի քննության անհարկի ծգձգումն է, և խթանել կողմերին իրենց դիրքորոշումը ներկայացնել և հիմնավորել (ապացույցներ ներկայացնել) դատավարության սկզբնական փուլում: Հեղինակը կարծիքով, որպեսզի արդարադատությունը չվերածվի գուտ տեխնիկական գործընթացի, այլ ուղղված լինի օրենքով սահմանված կարգով վեճի քննությանը և լուծմանը. նախնական դատական նիստը պետք է հրավիրվի ոչ թե ըստ անհրաժեշտության, այլ պարտադիր բոլոր գործերով, և միայն դրանից հետո դատարանը կարող է գործը նշանակել դատաքննության<sup>11</sup>:

Թեև նախնական դատական նիստի վերաբերյալ Օ. Ն. Ղիորդիկայի տեսակետը դատավարական գրականությունում ենթարկվել է որոշակի քննադատությունների, այնուամենայիվ կարծում ենք, որ այն բովանդակում է առաջընթաց դրույթներ, որոնք կարող են հետագայում օրենսդրական կարգավորումների հիմք հանդիսանալ:

ՔԴՕ 22<sup>2</sup> գլուխը, որը կարգավորում է գործը դատաքննության նախապատրաստելը, որպես դատավարության այս փուլի կենտրոնական տարր սահմանել է նախնական դատական նիստը՝ նախապատրաստական գործողությունների գերակշիռ մասի իրականացման հնարավորությունը նախատեսելով բացառապես նախնական դատական նիստում: «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն առավել հանգանակից կարգավորել է նախնական դատական նիստը, քան գործը դատաքննության նախապատրաստելու փուլը՝ չսահմանելով դատավարության այս փուլի խնդիրները, նախնական դատական նիստից դուրս իրականացվող գործողությունները (թեև որոշ այդպիսի գործողություններ կարելի է առանձնացնել օրենսգրքի այլ գլուխներում նախատեսված իրավադրույթներից, սակայն դրանք այն նախապատրաստական գործողություններն են, որ պետք է իրականացվեն՝ անկախ այն հանգանքից՝ գործը դատաքննության նախապատրաստում է, թե ոչ), դատավարության այս փուլի հարուցման հիմքը, գործին մասնակցող անձանց՝ նախապատրաստական գործընթացին մասնակցության ձևաչափը և նման այլ ընթացակարգային հարցեր: Ավելին, դատական պրակտիկայում որոշ դեպքերում «գործը դատաքննության նախապատրաստել» և «նախնական դատական նիստ հրավիրել» հասկացությունները չեն էլ տարանջաւատվում միմյանցից, և գործը դատաքննության նախապատրաստելն ընկալվում է միայն որպես նախնական դատական նիստի հրավիրում:

Նախնական դատական նիստի նման իրավակարգավորման պարագայում անտրամբանական է այդպիսի նիստ հրավիրելու հնարավորությունը դատարանի հայեցողությանը թողնելը: Ակնհայտ է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլը կանոնակարգելիս օրենսդիրը որոշակի անհետևողականություն է ցուցաբերել: Մասնավորապես, նախնական դատական նիստ կարող է չիրավիրվել. նման պարագայում հարց է առաջանում՝ ինչպես պետք է իրականացվեն այդ գործողությունները: Պարզ է,

<sup>10</sup> Տե՛ս Диордиева О. Н. Предварительное судебное заседание в гражданском процессе // Мировой судья. 2005, № 6.

<sup>11</sup> Տե՛ս Նույն տեղում:

որ դրանք չեն կարող այլ կերպ իրականացվել: Կարծում ենք, որ նախնական դատական նիստ հրավիրելը ոչ պարտադիր լինելու պարագայում գործը դատաքննության նախապատրաստելը չի ծառայում իր նպատակին, ավելին՝ դա կարող է խոչընդոտել գործին մասնակցող անձանց իրավունքների լիարժեք իրականացմանը, ուստի գտնում ենք, որ նման նիստ հրավիրելու դատարանի հայեցողական լիազորությունը պետք է վերացվի: Մասնավորապես, առաջարկում ենք ՔՂՕ-ի 149<sup>8</sup> հոդվածի 1-ին մասը փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո պարտավոր է իրավիրել նախնական դատական նիստ»:

Հարկ է նշել, որ նախնական դատական նիստի անցկացման ՔՂՕ-ի իրավակարգավորումը տեխնիկապես թերի է: Մասնավորապես, օրենսդիրը չի կանոնակարգել ընդիհանուր բնույթի այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ նախնական դատական նիստի անցկացման կարգը, դատավորների ինքնաբացարկը, դատական սանկցիաների կիրառումը:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատավորները վերոնշյալ հարցերը լուծում են՝ դեկավարելով գործի ըստ էության քննության համար նշանակված դատական նիստի անցկացման ընդիհանուր կանոններով: Մասնավորապես, նշանակված օրը և ժամին դատարանը բացում է դատական նիստը, նշում, թե ինչ գործ է քննվում, հայտարարում է, որ գործը գտնվում է դատաքննության նախապատրաստելու փուլում, և որ իրավիրված դատական նիստը նախնական դատական նիստ է, սուուգում է գործին մասնակցող անձանց ներկայությունը, հայտարարում է դատարանի կազմը և պարզաբանում է ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու իրավունքը, լուծում է գործին մասնակցող անձանց և նրանց ներկայացուցիչների՝ դատական նիստին չներկայանալու հետևանքները, ապա անցնում ՔՂՕ-ի 149<sup>9</sup> հոդվածի 2-րդ մասում ամրագրված գործողությունների իրականացմանը՝ ըստ սահմանված հերթականության:

Օրենսդիրը չի կարգավորել նաև նախնական դատական նիստը հետաձգելու և մեկ այլ նախնական դատական նիստ նշանակելու հարցերը:

ՔՂՕ-ի 149<sup>8</sup> հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ կողմերը և դատավարության այլ մասնակիցները պատշաճ ծանուցվում են նախնական դատական նիստի վայրի և ժամանակի մասին: Օրենսդիրը, սակայն, չի կարգավորել այն դեպքերը, երբ գործում առկա չէ կողմից կամ դատավարության այլ մասնակցի՝ նախնական դատական նիստի վերաբերյալ ժանուցված լինելու փաստը հաստատող ապացույց:

Նշված հարցի կապակցությամբ ՀՀ Վճարեկ դատարանը բազմից նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիրուն կապված են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդիհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով պաշտպանվող մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռնված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն: Այդ իսկ պատճառով դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկացնելը դատարանի պարտականությունն է, որի չպահպանելը ՀՀ քաղաքացիական դատավա-

րության օրենսգրքի 227-րդ հոդվածի իմաստով դատավարական իրավունքի էական խախտում է<sup>12</sup>:

Գործնականում դատարանները նախնական դատական նիստի վերաբերյալ կողմի կամ դատավարության այլ մասնակցի պատշաճ ծանուցված չինելու պարագայում հետաձգում են այն և նշանակում մեկ այլ հերթի: Նման պրակտիկան որքան էլ արդարացված է, բխում է անձի արդար դատաքննության իրավունքի բովանդակությունից, սակայն պահանջում է օրենսդրական կարգավորում:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատավորները նախնական դատական նիստը հիմնականում հետաձգում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածով (գործի քննության հետաձգումը) սահմանված հիմքերով: Կարծում ենք, որ նման պրակտիկան կարող է օրենսդրական կարգավորման առումով ևս հարցի լուծման տարբերակ հանդիսանալ: Միաժամանակ գտնում ենք, որ պետք է կարգավորել նաև այն դեպքերը, երբ թեև նախնական դատական նիստը կայացել է, սակայն անհրաժեշտություն է առաջացել հրավիրել ևս մեկ նախնական նիստ: Այդպիսի անհրաժեշտությունը, օրինակ, կարող է պայմանավորված լինել նոր անձի (Երրորդ անձ կամ պատշաճ պատավիսանող) վարույթ մտնելու, հակընդդեմ հայցի հարուցման, հայցի հիմքը կամ առարկան փոփոխելու հետևանքով: Համեմատության համար նշենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը (86 հոդվ.) նախատեսում է, որ ըստ անհրաժեշտության՝ դատարանը կարող է հրավիրել մեկից ավելի նախնական դատական նիստ: Քանի որ մեկ այլ նախնական դատական նիստ հրավիրելու բոլոր հնարավոր դեպքերը կանխատեսել անհնար է, կարծում ենք, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համանման կարգավորումը կարելի է կիրառել նաև ՔԴՕ-ում:

#### **Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ.**

1. Հրավակարգավորման ներկայիս պայմաններում գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրը նախնական դատական նիստն է, որն ապահովում է դատավարության այս փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի հրականացումը.

2. Նախնական դատական նիստը հասուլ է ընթացակարգով իրականացվող գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների համակցություն է, որը կոչված է ապահովել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կողմերի, գործին մասնակցող այլ անձանց դատավարական իրավունքների լիարժեք հրացումը.

3. ՔԴՕ-ի 149<sup>թ</sup> հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Գործը դատաքննության նախապատրաստելիս դատավորը պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ստանալուց հետո, իսկ այդպիսին չստանալու դեպքում պատասխան ուղարկելու համար նախատեսված ժամկետի ավարտից հետո պարտավոր է հրավիրել նախնական դատական նիստ».

4. ՔԴՕ-ի 149<sup>թ</sup> հոդվածը պետք է հղում պարունակի ՔԴՕ-ի 18-րդ գլուխ սահմանական ընդհանուր կանոններին.

5. ՔԴՕ-ի 149<sup>թ</sup> հոդվածն անհրաժեշտ է լրացնել 3<sup>րդ</sup> մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Ըստ անհրաժեշտության՝ դատարանը կարող է հրավիրել մեկից ավելի նախնական դատական նիստ»:

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 3-2236(Ա) քաղաքացիական գործով 21.12.2006թ. որոշումը:

## THE TERMINATION OF THE PROCEEDINGS OF A CIVIL CASE AT THE PREPARATION STAGE OF A CASE

**Ashkhen GHARSLYAN**

*Post-Graduate Student of the Chair of Civil Procedure of Ysu*

One of the features of the legal regulation of the stage of preparation of a case for a hearing is the provision of possibility to terminate the proceeding of a case in this stage of judicial process. This regulation aimed to ensure the principle of procedural economy.

The legislator, however, has not regulated the procedure of dismissing a case in the stage of preparation of a case for a hearing. Particularly, in case of reveal of an appropriate ground for dismissing a case it is not clear whether the court has to discuss it at the preliminary session with the participants of the case.

The author has introduced the solutions of the issue by the judicial practice and suggested to provide for a clear procedure through several legislative amendments and to enlarge the circle of the grounds of termination of a case in the stage of preparation of a case for a hearing.